



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼՈՒԹՔԻԿ ԳՈՒՅՈՒՄՑԵԱՆ

Կ Տ Ա Կ

ԵՒ

Յ Ա Տ Կ Ա Ց Ո Ւ Մ

( ԿԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԲՔ . ՔԱՂԱՔԱՑԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ )

(Պործադրութեան միջոցները՝

օրինակներով և նմոյժներով բացատրուած)



Կ. Պ Ո Լ Ի Ս

ՏՊԱԿ. Յ. Մ. ԱԼԹԵԽԱՆ

1934





347.6  
9-96

ՆԱՐԴԱՌՈՒՅՈՒՆ ԳՈՒՅՔԻԿ

493

34(56)

Կ Տ Ա Կ

Ե Ւ

Յ Ա Տ Կ Ա Ց Ո Ւ Մ

( ԿՈՂՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՐՅ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԵՆՔԵՐ )

(Պորձադրութեան միջոցները՝

օրինակներով և նմույներով բացատրուած)


A 41221



Կ. Պ Ո Լ Ի Ս

ՏՊԱԳՐ. Օ. Մ. ԱԼԹԱՎԱՆ

1934



Հեղինակութեան իրաւունքի որէնքին տրամադրութիւններուն  
համաձայն, ներկայ աօխատութեան իրաւունքները վերապահն-  
ուած են :

Հետեւաբար, ո՞ւ եւ է անհատ կամ հաստատութիւն, նոյնու-  
թեամբ կամ նմանողութեամբ, ամբողջութեամբ կամ մասամբ,  
տպագրելու եւ հրատարակելու պարագային, օրինական խիս  
հետապնդումներու պիտի ենթարկուի :



45178-64

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներկայ տշխատութեան շուրջը փոխանակուած պաշտօնագիրերը ստորեւ նոյնութեամբ դրինք, յանձնելով զանոնք պատ, ընթերցողներու դատողութեան:

Ինչպէս կը տեսնուի, Պատ, Կտակաց Հոգաբարձութիւնը, Յն. 19 Ասպա. 1932 թուակիր գիրերով առաջարկած է մեզ պատրաստել կտակներու վերաբերեալ տասնմասիրութիւն մը, պատշաճեցներով գայն իրկրին օրինակներուն, եւ ներկայացուած զըրքորդը համապատասխան գտնելով իր նպատակին, 10 Նոյ. 1932 պաշտօնագրով կը յայտնէ իր գոհունակութիւնը:

Միւս կողմէ Պատկ, Բաղ, Ժողովը, իրացնելով եւ համամիտ գտնուելով իր վիաստարան անդամին տեսակէտին, հինգ ամիս վերջը կը վերադարձնէ կտակաց Հոգաբարձութեան 19 Օգոստոս 1933 թուակիր գրութեամբ, յանձնաբարիկով «ասկէ տառաջ պատրաստուած վարչական հրահանգներու ձեւին ներքեւ, յօդուած առ յօդուած շարայարելու սոյն տրամադրութիւնները»:

Պատկ, Բաղ, Ժողովը ակնարկած է 24 ապրիլ 1893ին պատրաստուած «Կտակի, Նուերի և Վազքի վերաբերեալ ինչ ինչ օրինական բնդինանուր ՏՐԱՄԱՊՐՈՎԻՆՇ» անուան տակ հրատարակութեան՝ ուղիեալ ազգային մարմններու, ծանօթացնելու հանրութեան Պետական տեսակէտը և նշգելու՝ կտակներու պատրաստութեան ձեւերը եւ միջոցները:

Յայտնի է որ, Օսմաննեան անկեալ կայրութեան շրջանին, կտակները աստուած պետական (Ֆրզին) դրութեամբ կը կարգադրուէին: Այդ թուականներուն «կտակ»ի վերաբերեալ որոշ ու վճռական ՕՐԷՆՔ մը գոյութիւն չունէր:

Իսլամ համարակալութիւնը, օգտուելով չորս զինաւոր կրօնապետներու (իմամ) զարաւիրներէն, բազգատելով տիրոս տարակարձութիւնները (զրյասը Ֆիւզենա) կը գատէին ու կը վճռէին ներկայացուած հարցերը:

Յոյները, ներքին կանոնագրութեան մէջ, ունեցած էին կրտակներու վերաբերեալ ինքնայատուկ տնօրինութիւններ: Յետոյ, ընդարձակուելով այդ իրաւասութիւնը (1891), միւս ազգութիւններու նման, Հայերն ալ օգտուեցան այդ արամադրութիւններէն, այնպէս որ, մեթրաբոլիտարաններու եւ առաջնոր-

դարաններու կողմէ պատրաստուած, վատերացուած կտակագիրները եւ անոնց շուրջ յարուցուած առարկութիւններու մասին տրուած որոշումները, վճռագիրները, վատերական նկատուցան պաշտօնատուններու կողմէ:

Այդ պայմաններու տակ, Պոլսոյ Հայ Պատրիարքարանը, Կեդր. վարչութեան ծերներէցութեամբ եւ մասնագէտիւաւգէտներու մասնակցութեամբ պատրաստուած է յիշեալ 24 ապրիլ 1893 թուակիր տուումնասիրութիւնը՝ պատշաճնեցնելով զայն ընդունուած եւ ակնկալուած տեսակէտներուն եւ վարչական տըրնօրինութիւններուն, եւ ասիկա Պատրիարքարական յատուկ ՀՌԱՀԱՆԳՈՎԸ յանձնաբարուած է Թաղ. Մարմիններուն առ ՚ի գործադրութիւն:

Ասկէ զատ, հրատարակուած է նաեւ «Մատակարարութիւն ազգային վագֆններու» ՀՌԱՀԱՆԳՈՎԸ:

Երկու աշխատութիւններ, երկուքն ալ իրարմէ անջատ սկզբգրունքներով եւ ցուցմունքներով գործադրութեան դրուած են ժամանակին:

Առաջինին, այսինքն կտակներու վերաբերեալ մասները, 4 Հոկտ. 1926 թուականին սկսեալ, Թրք. քաղաքային նոր օրէնքով ջնջուած են:

Հետեւաբար, Թաղ. Ժողովոյ կամ կտակաց Հոգաբարձութեան կողմէ ուսումնասիրուելիք եւ բաղդատուելիք հարցերը՝ ներկայ օրենքին տրամադրութիւններն են:

Վատահ եմ թէ Թաղ. Ժողովը իր օրէնսգէտ անդամներովը լաւ զիտէ թէ, իրաւագիտական երկասիրութիւններու մէջ, մասնաւրաբար մասնագէտները, խիստ լրցութեամբ պիտք է մօտենան գիտական բառերուն եւ ոմերուն (styles): Երբ, «ՕՐԵՆՔ» ևմեկնաբանութիւն» «որումնագիր» «հանունագիր» «ՀՌԱՀԱՆԳՈՎԸ» «ուղաբերական» ի պէս զատորոշուած եւ նշանակալից պարբերութիւնները իրարու հետ շիռթուին, աշխատութեան իմաստը հիմնովին կը փոխուի:

Ահա թէ ինչո՞ւ մեր ներկայ ուսումնասիրութեան անունը չի կրցինք նշանակել իրբեւ «ՀՌԱՀԱՆԳՈՎԸ» եւ ինչո՞ւ չկրցինք հետեւելու Թաղ. Ժողովոյ տնօրինութեան։ Կը կարծենք թէ պատկ. Թաղ. Ժողովը իր բազմազբաղ միջոցին տուած ըլլալու է այդ որոշումը, մինչդեռ Պատ. Կտակաց հոգաբարձութիւնը, աւելի գիտական ու գործնական հայեացըով մօտեցած է հարցին, եւ իր պաշտօնագրերուն մէջ ըսած է. «Մեր փակաքն է ներկայ օրինական տրամադրութիւններու ամփոփումը հրատարակել, անշուշտ մեկնաբանութեամբ (քեֆսուր)՝ աւելի որոշ կերպով համակցուելու համար»։

Այդ ուղղութեամբ պատրաստուած ներկայ աշխատութիւնը եւ վատահ ենք թէ պիտի կրնայ ծառայել իր նպատակին։

Ներկայիւս պարտք կը համարեմ յայտարարելու թէ երկարաբիրութեանս մէջ հանգիպելիք հաշուական մասերը , պատրաստուած են հմուտ ելմտագէտ, մասնազէտ և կտակաց Հոգաբարձութեան անդամ Տիար Խօրէնաւէր Աստուածատուրեանի կողմէ :

Նախարարութեանը, պատրաստուած է Պատ . Կտակաց Հոգաբարձութեանը և մէնք հանոյրով կը հրատարակենք զայն անփոփոխ:

## ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՌԱՋԱԿԱՆ ԴԵՐԱՎԱՐՈՒՄ

Կ. Պոլիս, 3 Սեպտ. 1932

ՀԱ.ԱՐԵ.Բ 599

Աղնուաշուք Տիար Լութիկ Գույշումճեան

Կտակաց Հոգաբարձութիւնը ցաւով կը զիտէ որ մերթ ընդմերթ անժառանգ կը մեռնին բորեկցիկ անձեր, որոնց հարստութեանն չի կրնար օգտուիլ ազգը :

Կը խորհինք որ այս կորուսոք առաջ կուզայ նաև մասամբ, ժաղավրդեան՝ երկրին օրէնքներուն անհմտութեանն, այնպէս որ ոմանց մաքրին մէջ քայցած է այն համսկումը թէ ազգին համար կտակ բնելու և յետ մանու յարգել տալու հնարաւորութիւն չկայ, մինչդեռ քաղաքային օրէնքին մէջ, թէ նույիրատուութեան և թէ կտակի (վասիլիք) մասին, որոց տրամադրութիւններ կան, որոց քաղուածաբար թարգմանութիւնը և ցրուումը մեծ օգտակարութիւն յասաջ պիտի բերէ :

Վասան բլլալով երկու լիզուներու և օրէնսգիտական բացատրութիւններու մասին Զեր հմտութեանը, կը կնողրենք որ հաճիք սատաննել այս աշխատութեանը, որ ազգին կարեւոր մէկ պէտքը պիտի լրացնէ և թերեւու միջոց մը պիտի բլլայ կտրգ մը բարեկցիկ հայերու, իրենց հարստութեանն բաժին հանելու ազգին բարեկ օրծուկան և կրթուկան պէտքերուն :

Յաւառլով որ չէք մերժեր մեր այս առաջարկը կը յայտնենք Զեզ մեր խորին յարգանաց հաւասարիքը :

Մնամք յարգանօֆ Կտակաց Հոգաբարձութեան

վ. Ասենազպիքի

Ասենապետ

թ. Ա. 20.ԳԻԿԱԱՆ

Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀԱՄԱՐ 609

Կ. Պոլիս 19 Սեպտ. 1932

Ազնուաշուք Տիար Լութիկ Գույյումճեան

Կտակաց Հոգաբարձութիւնը իր վերջին նիստին, չնորհակառ լութեամբ տեղեկացաւ Զեր յանձնառութեան, վագֆի և նուիրառառութեան վերաբերեալ երկրին ներկայ օրէնքներուն թարգմանութիւնը ներկայացնելու համար ժողովուրդին :

Հոգաբարձութիւնս ոյս գործին պատրաստութեան պէտք տեսաւ, նկատելով որ 1893 թուականին, այսպիսի աշխատութիւնն մը կատարուած է և ներկայիս այդ օրէնքները փոխուած ըլլալով, ամէն կերպով օգտակար կրնայ ըլլալ նոր օրէնքներու ծանօթացումը : Ներփակեալ կը յղենք Զեր օրինակ մը, 1893 թուականին ընդունուած ազգային վագֆներու վերաբերեալ արամադրութիւններէն, ինչպէս նուև ազգային վագֆներու մատակարարութեան հրահանգէն :

Մեր փափաքն է, ներկայ օրինական արամադրութիւններու ամփոփումը հրատարակել, անշուշտ անոնց մեկնարանութեամբ, (թէֆսիր) աւելի որոշ կերպով հասկցուելու համար:

Անշուշտ Զեր ազնուութիւնը այսպիսի գործի մը պատրաստութեան համար ինչ որ պէտք է կը գործադրէ և կարճ ժամանակի մէջ կը դրէ մեզ ապագրուելու համար :

Մնամք յարգանօֆ Կտակաց Հոգաբարձութեան

Վ. Ատենապիրի Ատենապետ

Թ. Ա. ԶԱԳԻԿԵԱՆ Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՀԱՄԱՐ 631

Կ. Պոլիս 10 Նոյեմբ. 1932

Ազնուաշուք Տիար Լութիկ Գույյումճեան

Հոգաբարձութեանս ինդրանիօք, Զեր ազնուութիւնը, կտակներու վերաբերեալ օրինական արամադրութիւններ պարունակող աշխատութիւնն մը պատրաստութեան մէջ նկատողութեան տռաւ զայն :

Յանուն ժողովոյ կը յայտնենք մեր չնորհակալութիւնը և կը յուսանք որ նման աշխատութիւնն մը իր օգտակարութիւնը պիտի ունենայ անոնց համար, որոնք կը փափաքին կտակ կամ յատկացում ընել ազգին :

Մնամք յարգանօֆ Կտակաց Հոգաբարձութեան

Վ. Ատենապիրի Ատենապետ

Թ. Ա. ԶԱԳԻԿԵԱՆ Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

## ՊՈՏԿ. ՔԱՂԱՔ. ԺՈՂՈՎՈՅ ՏԵՍԱԿԵՏԸ

թ. 870

19 Օգոստոս 1933

**Պատ.** Հոգաբարձութիւնդ տարւոյս՝ մարտ 11 թ. և 662 համարաւ ուղղած զբովը կը ներկայացնէր կտակներու մասին զոյութիւն ունեցող ներկայ օրէնքներու մէկ աշխատասիրութիւնը ու կը խնդրէր արտօնել անոր տպագրութիւնը, նկատի ունենալով անոր ազգային հաստատութեանց ընծայելիք օգուտը:

Այդ աշխատապիրութիւնը բաղաքական ժողովին կողմէ իր իրաւագէտ անդամներէն վ. Ագկիւլ Էֆ.ի ուսումնասիրութեան յանձնուած ըլլալով, յիշեալը այդ աշխատութիւնը կատարած և մատուցած է իր տեղեկագիրը, որով Պատ. Հոգաբարձութեանդ այդ մասին ունեցած նախաձեռնութիւնը յոյժ զովելի և միանգամայն հեղինակին կողմէ թափուած աշխատանքն ալ չնորհաւորելի և օգտակար կը գտնէ և աւելցնելով որ այդ աշխատասիրութիւնը պատրաստուած է իրը ուսումնասիրութիւն և ոչ թէ իրը հրահանգ այնպէս որ տեղ տեղ հեղինակը տեսակէտներ կը յայտնէ իր անոււամբ և որոշ ու յատուկ տրամադրութիւնք կը պակսին հոն և թէ Պատ. Հոգաբարձութիւնդ լաւագոյն գործ մը կատարած պիտի ըլլար, աչքի առջե ունենալով ասկէ առաջ պատրաստուած հրահանգները՝ վարչական հրահանգներու ձեւին ներքե, յօդուած առ յօդուած շարայարելու սոյն տրամադրութիւնները և որով հեղինակին կատարած աշխատութիւնը իրը ուղեցոյց միայն պիտի ծառայէր Պատ. Հոգաբարձութեանդ իր պատրաստելիք վարչական հրահանգին: Ուստի Տիար վ. Ագկիւլ օգտակար կը դատէ, այս հիման վրայ լրացուելու պայմանաւ, այդպիսի դորձի մը հրատարակութիւնը որ կարեւոր պէտքի մը գոհացում պիտի տայ:

**Քաղ.** Ժողովը նկատի առաւ սոյն տեղեկագիրը և համամիտ գտնուելով պարզուած տեսակէտին որոշեց ներփակ վերադարձը նելու վերոյիշեալ աշխատասիրութիւնը և յանձնարել որ Պատ. Հոգաբարձութիւնդ անկէ օգտուելով, հրահանգի ձեւով պատրաստէ այդ աշխատութիւնը՝ անկէ առաջ պատրաստուած հրահանգներուն համաձայն ու զայն հրատարակութեան տայ, սոյն աշխատասիրութիւնը վերադարձնելով հեղինակին որ զայն պահանջած է յատուկ գրով մը:

ՀԱԼՄԱՐ 736

Կ. Պոլիս, 13 Նոյմբ. 1933

## Ազնուաշութ Տիար Լութֆիկ Գույումճեան

Բարեսէր ազգայիններու, ազգային նուիրատուութեանց առաջնորդ ըլլալու համար, երկրին արդի օրէնքներուն համաձայն Զեր պատրաստած աշխատութիւնը Ժողովիս կողմէ քննուելէ յետոյ ներկայացրուցած էր Պատկ. Քաջաքական Ժողովոյ, որ իր 19 օգոստոս թուակիր նամակով յանձնարարած էր հրահանգի վերածել նոյն աշխատութիւնը և 26 հոկտեմբեր թուակիր նամակով կրկնած էր իր առաջարկը։

Ժողովը իր վերջին նիստին մէջ նկատողութեան առնելով սոյն զրութիւնը, որուեց խնդրել Զեր ազնուութենէն, որ հաճի նոր աշխատութիւն մը յանձն առնել այս ուղղութեամբ և լրացընել այս ձեռնարկը։

Դիւրութիւն մը ըլլալու համար Զեզի, կը ներփակնաք Քաղ. Ժողովոյ 19 օգոստոս թուակիր նամակին պատճէնը, ինչպէս նաև նախապէս Զեր պատրաստած աշխատութիւնը։

Մնաք յարգանօն Կտակաց Հոգաբարձութեան

Ատենաղպիր

Ատենապետ

Թ. Ա. ԶԱԳԻԿԵԱՆ

Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

## ՆԱԽԱԲԱՆ

Այս հրատարակութիւնը կը պարունակէ կատակի և յատկացման մասին մեր երկրին արդի օրէնքներէն ծանօթութիւններ :

Կը բացատրէ թէ ի՞նչ կերպով ո՞ւեէ ազգային անհատ կարող է, եթէ փափաքի, իր ստացուածքէն բաժին մը արամադրել բարեպաշտական, կրթական և բարեգործական նպատակներու համար :

Անհատի մը այս բաղձանքը իրականացնելու համար թուրքիոյ քաղաքային արդի օրինագիրքին մէջ առանձին արամադրութիւններ կան, որոնք առանց լուսարանութեան թերեւս անհասկանալի մնան :

Այս աշխատութիւնը կը կատարենք իսորհելով որ ամէն անհատ պիտակ է թէ՝ իրը մանկանացու, ուշ կամ կանուխ պիտի թուղու այս աշխարհու :

Իր մօտաւոր ազգականները, «որոնք իր բնական ժառանգորդաներն են, ատեն՝ մը զինքքը ոզգալէ և յիշելէ յիշոյ ակներե է որ ժամանակի ընթացքին զայն բոլորովին մունան : Իր թոռները և թոռնորդիները թերեւս յիշեն իսկ զինքքը :

Անմահ և անմոռանալի պիտի մնան միայն ոնսոնք որոնք իրենց կարողութեան համեմատ յիշատակութեան արժանի զորք մը կը կատարեն :

Այսպէս ոմանք մարդկութեան կը ծառայեն իրենց օգտակար գիւտերով, ուրիշներ ի սպաս կը զնեն իրենց հմտութիւնը ու վարչական կարողութիւնը որով միշտ յիշատակելի կը մնան :

Իսկ յաւիտեան անմահ են անոնք որոնք բարեպաշտական, կրթական և բարեգործական նպատակներով կտակ մը և կամ յատկացում մը կ'ընեն :

Հոգելոյս Պէզճեան ամիրա անդաւակ մեռած և իր գերգաստանի անդամներուն ժոռանգ մը չէ թողած, բայց մէկ զարէ ի վեր պատուվ և երախտագիտութեամբ կը յիշատակուի իր անունը և պիտի յիշուի ալ զարերէ վերջ, որովհետեւ իր բարերարութեանց արդիւնքները սերունդներ պիտի վայելեն :

Այս կերպով անմահացած են՝ Տատեան, Գարակօզեան, Սանասարեան, Գալֆայեան, Գազազեան, Եօսնէսցու, Մելքոնեան, Ինձէեան, Իզմիրեանց, Կիւմշեան, Կիւլպէնկեան, Յակոբեան, Ռւնեան, Ճիլանեան, Մանեասեան, Մերկերեան, Սրուանձտեանց

Վարդագարեան, Քէլէկեան եւլն. եւլն. որոնք իրենց կտակներով  
և նուիրատուութիւններով ազգին որբերը և հիւանդները կը  
կրթեն, կը դարմանեն, կը կերակրեն: Անոնց շնորհիւ է որ մեր  
եկեղեցիները ու կրթական հաստատութիւնները չէն ու կանգուն  
կը մնան:

Անոնց անունները զրոշմուած են =չ թէ կոթողներու վրայ,  
որոնք կրնան քանդուիլ ժամանակի ընթացքին, այլ սիրտերու մէջ  
որոնք միշտ կը բարախեն բարերարներու անման յիշատակներովը:

Այս կարգի բարերարներու թիւը աւելցնելու ջերմ փափա-  
քով, կտակաց Հոգաբարձութիւնս կ'ընէ այս հրատարակութիւնը:  
այն յայսով որ օգտակար թելաղբիչ մը և առաջնորդ մը պիտի ըլ-  
լայ ան ազնիւ հոգիներու համար:

Կտակաց Հոգաբարձութիւնս մըշտ պատրաստակում պիտի  
գտնուի բերանացի ծանօթութիւններով՝ օգնել բոլոր անոնց ո-  
րոնք պիտի փափաքին իրենց անունը անմտհացնելու ո և է բա-  
րերարութիւնով:

Այս պատեհութեամբ կտակաց Հոգաբարձութիւնս իր խորին  
շնորհակալութիւնը կը յայսնէ ծանօթ իրաւագէտ Տիար Լութֆիկ  
Գույումնեանի որ ընդ առաջ երթալով հոգաբարձութեանս խընդ-  
րանքին, մարդասիրական ծառայութիւն մը մտառուցանելու փա-  
փաքագով, հաճեցաւ անձնուիրարար և ձեռնահասօրէն պատրաս-  
տել այս օրէնսդիտական աշխատասիրութիւնը:

## Կ Տ Ա Կ Ե Ւ Յ Ա Տ Վ Կ Ա Յ Ո Ւ Մ

**Մանօքուրիւններ(\*) քբական արդի օրէնքներու մասին**

### *Բնդիմուր տեսուրիւն*

1. Մահաւրն վերջը ըլլալիք կարգադրուրիւններու մասին, թուրք Հանրապետուրեան արդի օրէնքները զանազան միջոցներ տեղին են:

*Մէնք, մեր ուսումնասիրութեան գլխաւոր առարկայ ըրբնք ակտակացութեամբ՝*

Բարեսէր անձ մը, իր անշարժ կամ շարժուն ստացուածքը, փափաքած ձեւով և օրէնքին մատնանշած պայմաններով, կարող է բարեգործական ռեկ հաստատութեան կտակել կամ յատկացնել :

*Օրէնքին սահմանին մէջ, կրօնական մարմիններու կամ հաստատութեանց (Տիեզնի Ecclesiastique) յատկացուած կտակները, կառավարեական մասնաւոր և պաշտօնական քննիչներուն հակառէն զերծ կտակացուած են<sup>(\*\*)</sup>:*

Հետեւ բարար այս տեսակ կտակներու և յատկացումներու համար պատրաստուելիք, պաշտօնագրեներով, կարելի է անուանել ուրոյն կամ արդէն գոյութիւն ունեցող մարմիններ մատակարարելու և հակառէն զերծ կտակացուած համար կտակուած և յատկացուած ինչքերը:

Հետզինետէ արուելիք բացատրութիւններէն որոշապէս պիտի հասկցուի թէ՛ յետ մահու կարգադրութեանց ձեւերէն կտակն է որ նախընտրելի է և կրնայ բազմացուած ամէն տեսուկէտներուն պատշաճէլ:

## Կ Տ Ա Կ

### *Վասիլյէկրնամէ Testament*

2. Ի՞նչ է կտակը: Կտակը կարգադրութիւն մըն է որ մահաւընէ վերջ կը գործադրուի:

Բարեսէր անձ մը միշտ տպահով ըլլալու է որ իր կինդանու-

---

(\*) Ազդ. Կեդր, Վարչութեան նաևն ժաղովը, ասկէ առաջ վաւերացուած եւ գործադրութեան դրած էր 24 ապրիլ 1893 թուակիր «կտակի», նույրի եւ վազֆի վերաբերեալ ինչ ինչ օրինական ընդհանուր տրամադրութիւնը անուան տակ հրատարակութիւնը եւ 1 դեկտեմբեր 1897 ին սՄասսկուլարու թիւն Ազգային վագֆներու հրահանգը:

Առաջինին տրամադրութիւնները չնշուած են ներկայ թրբսկան օրէնքներով, իսկ երկրորդը չնշող օրէնք մը տակային գոյութիւն չունենալուն, յառաջիկային մի քանի յաւելուածական փոփոխութիւններով եւ որինս կան չնշուած մասերը յապաւելով, կտակներու եւ յատկացումներու մասին եւս կրնայ գործադրուի:

(\*\*) Քաղաքային օրինագիրը յօդուած 80:

թեանը և իր գիտակցութեամբ կատարած կարգադրութիւնները, երբ յաւիտենական լոռութեան դատապարտուի, նոյնութեամբ պիտի իրագործուին:

Եթէ այդ կարգադրութեանց մէջ օրինական սխալ մը կամ անդորրադրելի վափաք մը սպրզած ըլլայ, կտակին զործադրութեան միջոցին կտակարարը այլ եւս կարելիութիւն չունենալով այդ սխալը գարմանել և ըլլալիք տարրեր կարգադրութեանց զէմ տարրել ու բողոքել, իր կտակն ալ կը մնայ անիբարականալի:

Ուրեմն, չափազանց ուշազբութիւն ընելու է կտակագրին պատրաստութեան, որպէս զի ոնեւէ կարգադրութիւն հանրային բարոյականի հակառակ և օրէնքի զէմ ըլլայ:

Մեր աշխատասիրութեան մէջ ջանացինք, կարելի եղած չափով, օրէնքին պահանջները մատնանշել և կտակագրի պատրաստութեան ձեւը բացատրել:

3. Արդի Թուրք Հանրապետութեան օրենքներով, բարեզորժական եւ բարոյական հաստատութեանց ինչպէս նաեւ ազգային մարմիններու ի նպաս ըլլալիք կտակները բացարձակապէս օրինաւոր են:

Զոր օրինակ, Քահանայից Միութեան, Դպրոց Դասերու, Ա. Եկեղեցիներու Բարեզարդութեան, Ուսուցչաց Օգնութեան Սընտուեկին, Որբախնամ Կամ Աղքատախնամ մարմիններուն, Օգնութեան կարօտ ուսանողներուն, Այրի երիցուհիներուն, Աղքային վաստակաւոր պաշտօնեայներուն եւլն. եւլն.:

Նոյնպէս Ա. Փրկչի Աղգ. Հիւանդանոցին, Որբանոցներուն, Աղգ. վարժարաններուն ի նպաստ ըլլալիք կտակները, անուանուելիք կտակակատարներու և կամ արդէն զոյութիւն ունեցող Աղպային մարմիններու միջոցաւ կը յանձնանձուին և նպատակին կը գործածուին: Այս տեսակ կտակները, անհատներու ի նպատակած կտակներէն բնաւ տարբերութիւն չունին օրէնքին առջեւ:

4. Կտակարար մը միւս կարող է իր պատրաստ կտակագրիը փոխելու կամ զնջելու:

Եթէ կտակագրին մէջ «անկանալի վերջին վափաքներս առնք են» ալ ըսուած ըլլայ, այդ տեսակ զրուածք մը օրէնքի առջև անարժէք է և կտակարարը երկրորդ կտակագրով մը կրնայ նախորդը իր վափաքած ձեւով փոխել կամ բոլորովին զնջել:

Ամէն մարդ պէտք է խորհի թէ՝ իր մեռնելէն վերջ յուզարկաւորութեան, հոգեհանգստեան և այլ կրօնական արարողութեանց ձեւը, մի միայն կենդանութեանը ինքը կրնայ իր վափաքածին պէս որոշել:

5. Կրօնական եւ բարոյական հաստատութեանց ի նպաս եղած կտակները, անհեածես եռ որ օրինական կտակագրով մը հաստատուին, այլապէս թողոնը դատապարտուած է կոռուախնձոր ըլլալու այնպիսի հեռաւոր կամ մերժաւոր ժառանդորդներու մէջ ու-

բոնց կեանքը և ապրելակերպը մեռնողին անձանօթ մնացած և կամ նոյն իսկ անհաճոյ թուած է :

Երբ ոեւէ անձ իր կենդանութեանը ուշացնէ կատարելու իր կտակը, պարտազանց գտնուելէն չարաչար կը տուժէ և անակընկալ մահուամբ իսկոյն կ'իրականանայ կենդանութեան ատեն մըտածած անհամ տեսարանները իր թողօնին չուրջ, որով իր յոդանատանջ աշխատութեանց արգասիքը, հովատար տերեւի մը նման կը մնայ աննշան :

Յ. Նախապահարում մըն է այն խորեղածուրիւնը քէ կտակի մը պատրաստուրիւնը կը փուրացընէ մահի :

Ինքզինքը քաջառողջ զգացող և անմահ ու յաւերժական նը-կատող որքան անհամներ ակնթարթի մը մէջ մահացած են :

Մինչդեռ ամէն բան յետ մահու կարգի գնող անձ մը, նոյն իսկ ծանր հիւանդութեան մէջ, հոգեկան հանգիստ և հրճուանք կը զգայ, Փորձով ալ հաստատուած է որ, այդ տեսակ ուրախ տրամադրութիւններ, շատ անդամներ կը ներգործեն հիւանդներու վիճակին վրայ ի նպաստ բարելաւման և ապաքինման :

Դ. Կտակ մը վաւերական եւ զորդադրելի ըլլալու համար, չորս զիստոր պայմաններ լրացնելու է :

Ա. Իրեն սեփական ինչքերը ուզած ձեւով տնօրինելու համար, օրինաւոր արգելքներ ունենալու չէ :

Բ. Կտակուած ինչքը օրէնքին ճշգած սահմանը անցնելու չէ :

Գ. Պատրաստուելիք կտակազրին ձեւը, օրէնքին տրամադրութիւններուն համաձայն ըլլալու է :

Դ. Կտակազրին բովանդակութիւնը օրէնքով ընդունելի պէտք է ըլլայ :

Այս չորս հարցերը, չորս զլուխներու բաժնելով քննենք ու բացատրենք :

Տ. Ուո՞նէ կարող են կտակ ընելու : Երբ մէկը իր տասնեկինդ տարիքը լրացնէ և իր դասոզութեանը տէրը ըլլայ, կրնայ իր ինչքերը կտակել :

Հեռատես և խոհեմ անձ մը իր կտակը քաջառողջ և խելահաս վիճակին մէջ պէտք է ընէ:

Մահացու կամ ծանր հիւանդութիւն, խելքի տկարութիւն ունենալէն և կամ ցնդելէն վերջը, շատ ուշ մնացած կ'ըլլայ կը-տակը պատրաստելով յետ մահու իր բաղձանքները գործադրել աւալու :

Այդ վիճակին մէջ կտակազրի պատրաստել փորձելը, անհամաձայնութիւններու, տարիներ տեւող դասավարութիւններու, ծախքերու, և անախորժ վէճերու պատճառ կը դառնայ :

Ինքզինքը տկար զգացող, զերմութիւն ունեցող, խիթով և ցաւերով տանջուող մէկը կարող է իր կտակը պատրաստել, կը բաւէ որ զիտակցութիւնը կորսնցուցած չըլլայ :

Դատելու կարողութիւնը կորսնցուցած արքեցող մը չի կրնար կտակ ընել։ Նոյն իսկ ալքով չգործածող մը, երբ պատահաբար զինովնայ և այդ վիճակին մէջ պատրաստէ իր կտակը, անվաւեր է։

Աւրեմն, կտակադրին պատրաստութեան միջոցին կտակարար մը պէտք է իր դատողութեան տէրը ըլլայ։ Իր դիտակցութեան տէրը եղող մէկը, երբ կտակը պատրաստելէ յետոյ, ունէ պատմառաւ դատողութիւնը կորսնցընէ, կտակադրիր կը մոտյ վաւերուկան։

Միայն թէ արսիսի անձ մը իր պատրաստած կտակադրին պայմանները չի կրնար փոփօխութեան ենթարկել կամ չնշել երկրորդ կտակադրով մը։

Հետեւուար կտակադրի պատրաստութեան ատեն, ներկայ գտնուող երկու վկաները պէտք է յայտարարեն և ստորագրեն թէ «կտակարարը միացով առողջ ըլլալով կատարեալ զիտակցութեամբ ըլլած է իր կտակը»։

Ելիներն ալ, ամուսնացեալ ըլլան թէ ամուրի այր մարդոց նման ազատ են կտակելու իրենց ինչքերը։

Ամուսնացեալ կին մը, կտակ ընելու համար երբէք պարաւառոր չի իր ամուսնոյն հաւանութիւնը ստանալու։

Մէկը եթէ մախուժի, չարութեան և կամ յառի մատակարարութեան պատճառաւ արդիլեալ (մահճուր) ըլլայ ու խնամակալի մը խնամքին ենթակայ, կտակ ընելու համար պէտք չունի իր խնամակալին հաւանութիւնը առնելու, կը բաւէ որ խիլքի հեւանդութիւն ու հոգիկոն տկարութիւն չունենայ։

Կոյր, համր կամ խուլ ըլլան ալ արդիլք չէ կտակ ընելու։

Խուլ-համրը եթէ զրել ու կարդոյ իսկ չզիտնայ, համրերու յատակ նշաններով կրնայ արտայայտուիլ և իր կտակը դրել տալ։

Կոյր մըն ալ նմանապէս կրնայ կտակ ընել, այսպիսիները օսրենցով կտակադրիը կարդալու պարտաւորութիւնէն բացառութիւն կը կազմեն։ Կոյր մը կամ բերանացի կ'արտայայտուի և կամ մէկը անոր ձեռքը առաջնորդելով, թուղթին վրայ իր կտակը ու փափաքը զրոյմել կուտայ։

9. Օսար երկիր բնակող Թթեանպատակները կբնա՞ն կտակ ընել։ Օտար երկիր բնակող այն թթքահպատակները ուրոնք ամէն առի իրենց հայրենակցական պարտականութիւնը կատարելով պահած են հպատակութիւննին, կրնան դիմել աեզայն թրքական հիւպատուարանը և պատրաստել տալ իրենց կտակը։

Եթէ կտակադրիը նախապէս կտակարարին ձևուագրովը պատրաստած և պահուած է, պէտք է իսկայն յանձնել թրքական կիւպատասարին։

Կարելի է նաև տեղւոյն օտար նօտարին վաւերացնել տալ

պատրաստուած կտակագիրը, միայն թէ կտակարարին մահուան պարագային, անհրաժեշտ է անմիջապէս յանձնել դայն թրքական հիւապառաւրանին գործադրութեան համար։

10. Օսւանիպատակներուն կտակագիրները գործադրելիք են։ Թուրքիոյ մէջ հաստատուած առարանգատակի մը կտակագիրը եմէ թրքական քոնզաքային օրէնքին համաձայն պատրաստուած է, վաւերական կը հսմարուի և գործադրելի է։

Վաւերական է նաև օսւարանպատակի մը այն կտակը որ իր պատկանած երկրին օրէնքներուն պատշաճեցնելով պատրաստած է։

#### ԿՏԱԿՈՒԱԾ ԽՆՁՔԻՆ ԶԱՓԲ

11. Ի՞նչ և բոլոօք. Մեռնողի մը թողացած շարժուն և անշարժ գործերը կը կազմեն թողֆուր։

Սյամի ամէն տեսակ պատրաստ դրամ, բաժնեթուղթ, պարտոթուղթ, արժեթուղթ, զանազան պահանջներ՝ մուբհակով կամ ասոնց մուրհակի, ամէն տեսակ կարասի, ապրանք, կտուած, կենաց և հրդզնի տպահովագիրն, մինանորն (breve), հեղինակով թեան իրաւունք, հոնքային և անտառային տանձնաշնորհումներ և լին։ եւլին։

Ասոնք ամէնքը օրուան արժեքով կը գնահատուեն ու դրամադլուխի կը վերածուին։

Այս զումարէն կը զեղչուին յուղարկաւորութեան և դատական ծախսքերը(\*), մեռնողին ինամքին ենթակայ և միասին տպրողներուն միամսեայ պարհեագիրը, բժիշկին, հիւանդապոհին, գեղագործին և զանազաններու պահանջները, կառավարական, էվգաֆիկ քաղաքապետութեան տուրքերը և լին։

Մնացոծ գումարին կ'ըսուի թողօն օրու վրայէն կը հաշուի ժառանգորդներուն իրաւունքը և կտակուած գումարը։

12. Առօնէկ կրեան ժառանգել։ Մեռնողին ժառանգորդները երեք առտիքան են։

Ա. Ժառաւիդը, այսինքն զաւակները, թոռները, թոռնորդիները և այսպէս շարունակաթար(\*\*\*). զաւակներէն մէկը երբ մեռնողէն առաջ մնան առած ըլլայ, շառաւիզը իրեն կը յաջորդէ։

Բ. Ծնաղիքը. Այսինքն հայրը և մոյրը, երբ մեռնողը շտառւիլ չունենայ, ծնողքը ժառանգորդ կ'ըլլայ։ Եթէ ծնողքն ալ մեռած ըլլայ, անոնց շառաւիզը, այսինքն թողանը ձգողին եղբայրները, քայլերը կամ անոնց շառաւիզները կը ժառանգեն։

(\*) Թողօնը կնքելու, ցուցակագրելու, պատրաստելու, կտակագիրը բացուելու, զոյքերու պաշտօնական վաճառման եւլն. եւլն։

(\*\*) Մանչ եւ աղջիկ հաւասար են։

Գ. Մեծ հայրը եւ մեծ մայրը. Մեռնողը երբ շառաւիղ, ձնողք և կամ եղբայր, քոյր, չունենայ, մեծ հայրը կամ մեծ մայրը ժառանգորդ կ'ըլլան: Եթէ ասոնք ալ մեռած ըլլան, ասոնց շառաւիղը, այսինքն մեռնողին հօրեղբայրները, հօրաքոյրները, մօրեղբայրները, մօրաքոյրները կամ ասոնց շառաւիղները ժառանգորդ կ'ըլլան:

Դ. Ասոնցմէ ի զատ կայ նաև մեռնողին կողակիցը, այսինքն այրը կամ կինը:

Հետեւարար վերոյիշեալներէն զուրս մեացող ուեէ անհատ որինաւոր ժառանգորդ չի նկատուիր:

Մեռնողը եթէ այս յիշուած ազգականներէն ոչ մէկը ունի, և եթէ կտակ ալ չէ ըրած, թողօնը ամբողջութեամբ Պետութեան կը պատկանի:

Կը թայ զիտնալ թէ. վերոյիշեալ ժառանգորդները եթէ գոյութիւն ունենան, մէկը իր ունեցած ստացուածքը ամբողջութեամբ կրնա՞յ ուեւէ անձի մը կամ հաստատութեան մը կտակել:

13. Վերապահեալ բաժին. Անհատ մը չի կրնար իր բոլոր ունեցածը ուրիշ անձի մը և կամ հաստատութեան մը կտակել: Օրէնքը կ'արգիլէ ստիկո, այլ ստիպուած է իր ունեցածին մէկ յասը որոշ համեմատութեամբ մը օրէնքին ճշգած իր ժառանգորդներուն յատկացնել: Ժառանգորդներու ժառապահները այս բաժիններուն կ'ըսուի վերապահեալ բաժին(\*):

Վերապահեալ բաժին ունին մեռնողին.

Ա. Շառաւիղը (զաւակները և թոռները).

Բ. Ծնողքը.

Գ. Եղբայրները և քոյրերը.

Դ. Կողակիցը.

Վերապահեալ բաժին չունին մեռնողին

Ա. Եղբօր և քրոջ շառաւիղները.

Բ. Մեծ հայրը և մեծ մայրը և անոնց շառաւիղները, այսինքն մեռնողին հօրեղբայրը, հօրաքոյրը, մօրեղբայրը, մօրաքոյրը եւլն.

Հետեւարար անհատ մը կրնայ իր ամբողջ ունեցածը կտակել ուրիշի մը կամ հաստատութեան մը եթէ չունի վերապահեալ բաժին իրաւատէր մերձաւոր ազգականներ:

14. Ուշա՞փ կարելի է կտակել. Նուրբ հաշիւները մասնագէտներու թաղելով, յիշենք միայն հետեւեալ պարագաներու տակ կտակուելիք զումարին համեմատութիւնը:

Երբ մէկը ունենայ.

1. Շառաւիղ (զաւակ եւ թոռներ) կրնայ կտակել իր ինչքին 0/0 25 —

2. Շառաւիղ եւ կողակից » » » » 0/0 18,75

(\*) Մահֆուզ հիսուէ, Droit de réserve.

3. Հայր, մայր եւ կամ ասոնցմէ մէկը, եթէ՝ >	>	>	0/0 50 —
շառաւիդ չունի			
4. Հայր, մայր եւ կողակից	>	>	0/0 37,50
5. Հայր կամ մայր եւ եղբայր ու քոյր	>	>	0/0 62,50
6. Եղբայր, քոյր եւ կողակից	>	>	0/0 56,25
7. Եղբայր եւ քոյր միայն	>	>	0/0 75 —
8. Հայր կամ մայր, եղբայր, քոյր եւ կողակից	>	>	0/0 46,87
9. Միայն կողակից	>	>	0/0 50 —
10. Երբ մէկը չունենայ շառաւիդ, կողակից, հայր, մայր եղբայր, քոյր կրնայ կտակել իր ինչքին ամրողը		0/0 100—	

Զանց կ'ընենք հոս բացատրել «օգտուելու իրաւունքը» կը-  
տակելու պարագան և կամ կողակից մը օգտուելու իր իրաւուն-  
քը նախընտրելու պարագան :

Նաև զանց կ'ընենք բացատրել թէ կտակ մը եղած պարա-  
գային ի՞նչ համեմատութեամբ պիտի ստանան ժառանգորդները (\*)  
քանի որ մեր խօսքը կտակներու մասին է միայն .

Երբ կտակարար մը իր իրաւունքին ունեցած քանակէն  
աւելի կտակած քլլայ, այդ աւելիին անընդունելի կը չկտառի և  
ժառանգորդները, տակաւին ժամանցում աեղի չունեցած, և թէ  
դատարան դիմեն, այն ատեն դատաւորը նախ ժառանգորդաց կը  
բաժնէ իրենց վերապահեալ բաժինները, և յետոյ կտակագրի բա-  
ժինները: Բայց և այնպէս այս պարագային կտակին դոյու թիւնը  
երբէք խնդրոյ առարկայ չկրնար ըլլալ:

### ԱՏԱԿԱԳՐԻ ՄԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԶԵՒԵՐԸ

15. Կտակագրի մը ի՞նչ ձեւերով կրնայ պատրաստուիլ .— Կտա-  
կագրի մը պատրաստութեան համար՝ մասնաւոր հոգ տանիկու է:

Օրէնքին պարտադրած տրամադրութիւնն երուն դէմ, մաս-  
նագիտական կամ աննշան ոեւէ թերութիւն, կրնայ ոչնչացնել  
ամէն ծրագիր:

Օրէնքին նախատեսած ձեւերը երեք են (\*\*) .

Ա. Կտակարարին ձեռքի գրով պատրաստուած կտակ .

Բ. Նօտարին կտմ դատարանին միջոցաւ պատրաստուած  
կտակ :

Գ. Երանացի կտակ :

Առաջին ձեւ կտակագրի

16. Կտակարարին ձեռքի գրով պատրաստուած կտակ .—  
Այս ձեւը պարզ, գործնական և աժան ըլլալու առաւելութիւն-

(\*) Տես այս մասին մեր «Թուրք քաղ. օրէնքը» զիրքին 144րդ էջը .

(\*\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 478:

ները ունի, և յետոյ կտակի մը համար փափաքուած դադանապահութիւնն ալ կ'ապահովուի:

Սակայն, ունի նաև կարգ մը անպատեհութիւններ, օրինակի համար, դիւրութեամբ կը կորսուի և կամ ուրիշ թուղթերու կը խառնուի, կրնայ շահազրգողներու կողմէ զողցուիլ կամ փճացուիլ, կրնայ ուրիշ չարաշահութեամբ յաւելումներ կրել և խարդուխուիլ:

Կտակարարի մը վերջին փափաքները այս ձեւով օրինականացնելու համար, անհրաժեշտ է կտակազիրը օւէնքին պատշաճեցնել:

Ձեռագրով պատրաստուած կտակազիր մը վաւերական<sup>(\*)</sup> ըլլալու համար:

Ա. Կտակազիրը սկիզբէն մինչև վերջը կտակարարին ձեռքի գրովը գրուած ըլլալու է.

Բ. Նոյն գրովը գրուած ըլլալու է նաև թուականը:

Գ. Կտակարարի գրովը ստորագրուած ըլլալու է:

Դ. Կտակազրին պաշտօնական լեզուով գրուիլը պարտաւորիչ չէ, կտակարարը կրնայ իր մայրենի լեզուվ և տառերով ալ խըմբագրել:

Ե. Մեքենայով գրուած կտակազիր մը՝ անընդունելի է.

Զ. Կտակազրին մէջ, ուրիշներու կողմէ եղած յաւելումները ունետք չունին, նոյն իսկ եթէ այդ յաւելումները կտակարարին զիտակցութեամբ եղած և ստորագրուած ըլլան, կտակազրին ջնջման պատճառ կը հանդիսանան, որովհետեւ օրէնքը որդշապէս պարտազրած է կտակարարը, իր կտակը ամբողջութեամբ իր ձեռքի գիրով պատրաստելու:

Է. Կտակազիր մը պատրաստելու համար ուրիշի մը խորհուրդ հարցնելը, մասնագէտի մը կտակին պատճէնը պատրաստել տալով, անկէ ընդօրինակելը, հիւանդ կամ տարիքու մէկու մը, զբելու զիւրութեան համար, ձեռքը ուրիշի մը բռնել տալը, օրինական անպատճութիւններ չեն ներկայացներ. կը բաւէ որ կը տակարարին ձեռագրին ինքնայտուկ գրոշմը փոխուած չըլլայ:

Ը. Կտակազրին պատրաստուած փայրը, թուականը (տարին, ամիսը, օրը, և օրուան անունը) որոշ գրուելու է: Եթէ թուականը կտակազրին տակը գրուած ըլլայ, ստորագրութիւնը անկէ անմիջապէս վերջը գրուելու է:

Ստորագրութիւնն ալ՝ անունով, մականունով և հասցէով յատակ գրելու է:

(\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 485:

Թէև պաշտօնական մարմնոյ մը կողմէ ստորագրութեան վաւերացուելուն պարտադրութիւնն չկոյ քաղաք. օիինագիրքին մէջ, սակայն վաւերացնել տալը իր մասնաւոր առաւելութիւնները ունի :

Վաւերացնող պաշտօնեան կամ նօտարը, պէտք է հետեւեալ ձեւով որձանողը :

«Կտակարարը իւ առջեւս գրած է անձամբ և թուականը ինքը գնելով ստորագրութիւնն է»: Կտակարարը գատելու կարողութեան տէր է և կտակարեալ գիտակցութեամբ շարժած է :

Թ. Չեռազգով պատրաստուած կտակագիր մը պահելու ձեւին համար, օրէնքը որոշ տրամադրութիւններ չունի: Կտակարարը կրնայ իր յարմար դատած կերպով պահել զայն: Կրնայ իր փաստանին, քահանային և կամ վատաճած անձին յանձնել:

Ժ. Ամէն պարագային, մահութենէն վերջ գտնուելիք կտակագիրը, անհրաժեշտ է խկոյն պատկանեալ պաշտօնատան այսինքն՝ հաշտարար դատարանին յանձնել:

### Երկրորդ ձեւ կտակագիր

17. Նօտարին կամ դատարանի միջոցաւ պատրաստուած կտակ. — Կտակարարը կը դիմէ հաշտարար դատաւորին կամ նօտարին և յետ մահու կատարուելիք իր բազմանքները, այսինքն իր կտակը գրել կուտայ երկու վկաներու ներկայութեան<sup>(\*)</sup>:

Այս ձեւով պատրաստուած կտակագիրը նոյն պաշտօնատան մէջ կը պահուի:

Ա. Կտակարար մը եթէ առանց դատաւորին կամ նօտարին ներկայութեան, կտակագիրը ունի մէկուն գրել տայ և վաւերացընելու համար միայն դիմէ նօտարին կամ դատարանին, և եթէ անոնք ալ ակտակարարը ներկայացուց և իր վերջին փափաքները գրուած ըլլալը յայտնեց գրելով վաւերացնելու ըլլան, այդ կը տակագիրը օրինաւոր չի համարուիր:

Բ. Կտակարարը իր վերջին կամքը դատաւորին կամ նօտարին բերանացի կամ գրաւոր պէտք է յայտնէ:

Պաշտօնեան այս յայտարարութիւնը լսելէ կամ կարդալէ յետոյ, պէտք է կտակագիրը ինքը զրէ և կամ իր կողմէ որոշուելիք մէկուն<sup>(\*\*)</sup> գրել տայ:

Յետոյ կտակագիրը կը տրուի կտակարարին որ կը կարդայ եթէ կարդալ գիտէ, իսկ եթէ չի դիմեր կամ կարդալու կարող չէ, այն ատեն պաշտօնեան բարձր ձայնուկ կը կարդայ ու կը բացատրէ:

(\*) Քաղաք սյին օրինագիրը յօդ, 478—483:

(\*\*) Իրաւաբանական վարժարանէ շրջանաւարտ մը կամ աւագ քարտուղարը նախընտրելի է:

Կտակարարը և վկաները մտիկ կ'ընեն :

Կտակարարը եթէ բովանդակութիւնը իր փափաքածին համապատասխան գտնայ, «ամբողջութեամբ կարդացի, ճիշդ իմ փափաքիս համաձայն զրուած է» և կտմ պաշտօնեան ամբողջութեամբ ինձի կարդաց, ես ալ մտիկ ըրի, ճիշդ իմ փափաքիս համաձայն գրուած է» զրելով կը ստորագրէ :

Ասոր վրայ, դատաւորը կամ նօտարը և կոմ անոնց կողմէ կարգուիլիք անձը, իր ձեռագրով թուականը կը դնէ ու կը ստորագրէ :

Առջին գործողութիւնը այս կերպով լրանալէ յետոյ, վկաներուն յայտարարութիւնները կը լսուին և արձանագրուելով, անոնք եւս կը ստորագրեն:

Վկաները պէտք է ըսեն և հաստատեն թէ կտակարարը իր փափաքները իրենց ներկայութեան յայտարարած է, թէ այց յայտարարութեան միջոցին կտակարարը իր դատելու կարողութեան տէրն էր, և թէ կատարեալ գիտակցութեամբ ըրած է իր կտակը, ու կտակագիրը իրենց և կտակարարին ներկայութեան կարդացուած է :

Դ. Կտակարարը եթէ կարդալու և ստորագրելու կարողութիւն չունենայ, վկաներուն յայտարարութիւնը հետեւեալ կերպով պէտք է ըլլայ :

«Մենք ստորագեալքս, կը վկայենք թէ մեր ներկայութեան վերոյիշեալ կտակագիրը դատաւոր (կամ նօտար) Ա. կարդաց և բացատրեց կտակարար Բ. ին, կտակարար Բ. յայտարարեց թէ յիշեալ պաշտօնագիրը իր վերջին փափաքները ճշդիւ կ'արտայայտէ : Ասկէ ի զատ կը հաստատենք թէ կտակարար Բ. դատելու կարողութեան տէր է և այս կտակը իր կտարեալ գիտակցութեամբ ըրած է» :

Դ. Քսանեմէկ տարիքը լրացնող ամէն այր թէ կին կրնան վկայ ըլլայ :

Սակայն անոնք որ :

1. Իրենց քաղաքային իրաւունքը չեն կրնար դործածել .  
2. Պատժապարա ընթացքէ դատապարտուած և քաղաքային իրաւունքներէ զրկուած են :

3. Դրեւ կարդալ չեն գիտեր .

4. Կտակարարին զաւակները, եղբայրները, քոյրերը և կամ ամուսինները և կամ կտակարարին ամուսինը. չեն կրնար վկայութիւն ընել (\*) :

Ե. Վկաներու յայտարարութեանց մէջ փոքրիկ թերացում մը ,

(\*) Քաղաքային օբինագիրը յօդ. 489:

օրէնքին մատնանշած ձեւական պայմաններէն աննշան զանցառութիւն մը, ա բողջ կտակագիրը ոչնչացնելու վտանգին կրնայ ենթարկել:

Զ. Կտակագրին մէջ եթէ պատրաստող պաշտօնեային կայ վկաններուն և անոնց սերունդին, այսինքն եղբայրներուն, քոյրերուն, ամսւուիններուն նուէր մը յատկացուի, անընդունելի է: Կտակագրիրը թէե վաւերական կը նկատուի, բայց այդ տեսակ անձերու եղած նուէրները կը ջնջուին:

Է. Այսուշամրերը իրենց կտակները գրաւոր կրնան ներկայացնել դատաւորին կամ նօտարին և այդ կերպով կրնան պատրաստել տալ:

#### Երրորդ ձեւ կտակագիր.

18. Թերանացի կտակ. (\*) .— Այս տեսակ կտակներ շատ հազուագէպ են և բացառիկ պարագաներու մէջ միայն կը գործածուին:

Ա. Երբ մէկը մահամերձ վիճակի մէջ ըլլալով, թողթ և գրիչ չկարենայ գտնել, կամ գրելու կարողութիւն չունենայ, և կամ պաշտօնական կտակագիր պատրաստելու համար նօտար կամ դատաւոր չգտնուի, և վերջապէս եթէ վերոյիշեալ երկու տեսակ կտակագիրներէն մէկը պատրաստելու կարելիութիւն շգտնուի, այն տեսն միայն մէկը կրնայ բերանացի կտակ ընել:

Բ. Թերանացի կտակ մը օրինաւոր նկատուելու համար, հետեւեալ պատճառներէն մէկուն գոյութիւնը անհրաժեշտ է:

1. Հիւանդութիւնը մէկէն ի մէկ ծանրացած և կամ արկածի մը զոհ եղած ըլլալով, անակնկալօրէն մահամերձ վիճակի մը սատցած ըլլալ:

2. Պաշարման վիճակի մէջ գտնուելով, երթեւեկի խզման պատճառաւ անսուլացութեան վտանգին ենթարկուած ըլլալ:

3. Տարափոխիկ հիւանդութենէ և կամ համաճարակի վարակուած ըլլալ.

4. Պատերազմի մէջ գտնուելով, ելն. եւլն.

5. Զօսուաշրջիկ մը լեռները մագլցած միջոցին փոսի մը մէջ կը գլորի.

6. Լեռան վրայ կամ անբնակ վայր մը ձիւնամրրիկի կը բռնուի և կամ կը մոլորի:

7. Սրտի տաղնապի կ'ենթարկուի.

8. Երկաթուղուոյ, չոգենաւի, օդանաւի կամ չարժակառքի արկածի մը զոհ կ'ըլլալ:

9. Պատերազմի մէջ կը վիրաւորուի:

Այս պայմաններու ներքեւ կետնքէն ամէն յոյս կը կարուի

(\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 486—489.

բայց զոհը իր զիտակցութիւնը, դատելու կարողութիւնը չի կարսցնցներ, անա այս միջոցին մէկը կրնայ բերանացի կտակ ընել իր շուրջիներուն :

Գ. Այս երրորդ ձե կտակն ալ, ճիշդ պաշտօնական կտակադրին պէս, նախ՝ կտակարարը մօտը գտնուող երկու վկաներուն իր վերջին փափաքները կը յայտնէ ինչ որ մտնուընէն վերջ, նոյն վկաներուն յայտարարութեամբ կը զործադրուի :

Դ. Բերանացի կտակին օրինաւոր ձեւը հետեւեալն է. կտակարարը, իր վերջին փափաքները, խօսքով կամ նշանով կը յայտնէ ներկոյ և զող երկու վկաներուն և կը ինդրէ որ այդ փափաքներուն համաձայն իր կտակազիրը պատրաստեն :

Վ. կաներէն մէկը, անմիջապէս թուղթ մը առնելով, կը զրէ կտակարարին բաղձանքները, թուականը, յայտարարութեան վայրը, տարին, տմբիսը, օրը, ժամը և թէ՛ ինքը և թէ միւս ընկերը կը ստորագրեն այդ կտակազիրը :

Ցհտոյ վկաները այս զրութիւնը իրենց ճամբու ընթացքին պատահած առաջին պատկանելով պրտշտօնատան կը յանձնեն, միեւնոյն տաեն ու բիշ զրաւ որ յայտարարութիւն մըն ու լ կը կցեն այդ զրութեան ուր կը բացատրեն այս ձե կտակին պատաստուելուն պատճառները։ Պէտք է հաստատեն նաև կտակարարին կտարեալ գիտակցութեան տէր ըլլալը, իր փափաքները յայտնած միջոցին։

Զ. Վկաները փոխանակ այդ տեսակ զրաւոր կտակազիր մը պատրաստելու, կրնան բերանացի ալ զատաւորին տեղնկացնել կտակարարին վիճակը վերջին փափաքները։

Օրինակի համար, Անգարա Էսկիչէկիր ճամբուն զրայ ինքնաշարժի արկած մը պատահելով մէկը մահցու կերպով վիրաւորուած կ'ըլլայ։ Նո երկու ընկերները իր մօտ վազելով կը լսեն մահամերձին վերջին փափաքները։

Մարդուն մեռնելէն վերջը, երկու ընկերները շարունակելով իրենց ճամբորութիւնը, զիւղ մը կ'իջեւանին, վկաներէն մէկը մեռնողին յայտարարութիւնները ճշգրտուէն կը նօթազրէ, թըւականը կը դնէ և ինքը և ընկերը միասին կը ստորագրեն։

Իրենց ճամբուն զրայ երբ առաջին անգամ հասնին տեղ մը ուր դատաւոր կայ, սոյն զրութիւնը կը յանձնեն հաշտարար դատաւորին, կցելով անոր ուրիշ յայտազիր մը որուն մէջ պէտք է ըստին թէ սկսակարարին յայտարարութիւնները իր կտարեալ գիտակցութեան վիճակին մէջ եղած են։

Է. Երկրորդ ձեւով, այսինքն նօտարի կամ զատաւորի միջո-

ցու պատրաստուած կտակագրի մէջ վկայ չկարենալ եղող անձերը, այս պարագային մէջ եւս վկայ չեն կրնար ըլլալ:

Ը. Զինոսորի մը այդ տեսակ պատրաստած կտակագիրը և յայտագիրը, փոխանակ գատաւորին, իր հրամանատար սպային կը յանձնուի:

Թ. Պէտք է նկատի առնել որ, բերանացի կտակը առժամանակեայ հանդամանք ունի:

Կտակի յայտարարութիւնը ըլլալէն վերջ, եթէ կտակարարը ամէն վտանգ անցուցած և իր երկիրը վերադարձած ու առաջին և երկրորդ ձեւ կտակիներէն մին ընելու կարողութիւնը վերստացած է, այդ թուականէն սկսեալ մէկ տմիս վերջը, բերանացի եղած կտակը անվաւեր կը նկատուի (\*):

Ժ. Եթէ վկաները կտակի յայտարարութեան օրէն սկսեալ մինչեւ վեց տմիս ձկարենան յայտագիր պատրաստել և ներկայացընել պատկան պաշտօնատան, այդ բերանացի կտակը եւս անվաւեր է:

18. Կտակագիր մը անվաւեր (\*\*): Կը նկատուի եթէ,

1. Կտակարարը առանց դատելու կարողութիւն ունեցած ըլլալու պատրաստած է իր կտակագիրը.

2. Թերութեամբ, նենգութեամբ սպառնալիքով և կամ բըռնութեամբ չինուած է կտակագիրը:

3. Օրէնքներու և կամ հանրային բարոյականի հակառակ զրի առնուած է:

4. Օրէնքներին նշանակած ձեւերով պատրաստուած չէ:

Անվաւերութեան համար ժառանչորդները, նոյն իսկ կտակընկալները կրնան դատի դիմել:

Սակայն այս դատին եթէ կտակագրին գոյութեան տեղեկացած և կամ անվաւերութեան պատճառներուն գիտակից եղած թուականէն սկսեալ մինչեւ մէկ տարի եթէ չձեռնարկուի, ժամանցումի կ'ենթարկուի:

Ամէն պարագային կտակագրի մը երեւան գալէն (բացուելէն) 5 տարի վերջ ձեռնարկուելիք ունէ կտակային դատ ժամանցումի ենթարկուած կը նկատուի:

(\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 488:

(\*\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 499—500.

## Կ Ց Ա Կ Ա Գ Բ Ի Ն Մ Ո Յ Շ Ն Ե Բ

20. Կտակագրի օրինակները ըստ կամս կը պատրաստուին կտակարարին կողմէ, սակայն զաղափար մը տալու համար մեր յարդելի ազգայնոց, ստորեւ կը ներկայացնենք կտակագրի երեք նմաններ, որոնք պատշաճեցուցուած են թրքական Հանրապետութեան քաղաքային օրինագրքին ցոյց տուած երեք ձեւերուն:

21. Ձեռագիրով պատրաստուելիք կտակագրի.—Արգէն ըսինք թէ ձեռագրով պատրաստուելիք կտակագիրը, սկիզբէն մինչեւ վերջը պէտք է կտակարարին ձեռքի գրովը գրուած ըլլայ:

Կտակարարը մեր ցոյց տուած ցանկին համեմատ վերապահեալ բաժինները անջանելով, և կոմ վերապահեալ բաժիններուտէր անձերուն ալ կտակէն բաժին յատկացնելով<sup>(\*)</sup>. մնացորդ գոյքերը կրնայ ուզած ձեւով կտակել իր փափաքած ոնձերուն կամ հաստատութեանց :

Ենթագրինք որ միայն կին մը և զաւակ մը ունեցող կտակարար մը 8000 ոսկի արժող տուն մը, 3400 ոսկի արժող խանութ մը, 1100 ոսկի արժող պարտէզ մը, 1000 ոսկի և 500 ոսկի արժողութեամբ բաժնեթուղթեր ունենայ դրամատան մէջ :

Ընդհանուր հարստութիւնը կ'ընէ 14.000 ոսկի, ուրկէ 200 ոսկի յուղարկաւորութեան ծախք եթէ զատելու ըլլայ, պէտք է գիտնայ որ թողօնը կ'ըլլայ 13800 ոսկի որուն հարիւրին 18.75ը այսինքն՝ 2587.50 ոսկին կրնայ կտակ ընել:

Ծիւեալին պատրաստելիք ձեռագիրը կտակագիրը պիտի ըլլայ հետեւեալը :

## Կ Ց Ա Կ Ա

Այսօր, հազար ինը հարիւր երեսուն երկու տարույն հոկտեմբեր ամսյն երեսուն և մէկին, երկուշաբթի օրը, Ֆերիքիւզի էշտէֆ է ֆէնտիք փող 27 թիւ տաւս մէջ, ստորագրեալս միտքով և մարմով քաջառողջ, նիւթեական և բարոյական գիտակութեան և դատելու կարողութեանս եւր ըւլալով, իմ ազատ կամքովս և ձեռագրովս պատրաստած եմ այս կտակս գիրս հետեւեալ պայմաններով:

1. Այժմ մեր բնակած, Ֆերիքիւզի էշտէֆ է փէնտիք փողոց 27 թիւ տունս տուած եմ մէկ հատիկ զատիկս Գրիգ որին:

2. Պոլիս, մեծ շուկայ 47 թիւ խանութիւն, կնշա Հէրմինէին պիտի ըլլայ:

3. Մալթէփէ Զընար ձատտէսի, 25 նոյեմբեր 1921 թուակիթ սեփականաթուղթով ունեցած պարտէզս եցտէք Պուլէի Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանցին Ս. եկեղեցւոյն յատկացուցած եմ, պայմանաւ որ այդ պարտէզիս եկամուտը այդ Ս. եկեղեցւոյն շուրջը հաստատուած հայ հիւանդանցին մէջ պատսպարուած ազգատ հիւանդներու պարէնին և գեղերուն նախուիք:

(\*) Այս պարագային ալ իրենց վերապահեալ բաժինները զատ կը տրուին:

մահուցնէս վերք, ամէն տարի Ս. Գևորգին հոգեհանդսուեան պաշտօն կատարուի:

4. Դալաթիոյ Օսմ. գրամատան մէջ գտնուող 1000 թր. ոսկի գրամմերէս, 800 ոսկի խասդիւզ, Խալքծողու Գալֆաեան որբանոցի Ս. եկեղեցւոյն պիտի յատկացուի, և այս գումարին տոկոսները, այդ Ս. եկեղեցւոյ շուրջը գտնուող որբուհիներուն զց եստներուն և պարէնին պիտի ծախսուի:

5. Յիշեւ Հազար ոսկին մնացորդ 200 ոսկին Ֆէրի-Գիզի Ս. եկեղեցւոյ թաղական խոնճոցոյ պիտի տրամադրուի, յուղաբաւորութեանս ծախսերը հոգալու համար:

6. Նոյնպէս Օսմ. գրամատան մէջ պահ գրուած 500 ոսկի արժողութեամբ բաժնենթուղթերս ալ յատկացուցած եմ Բերայի Աղքատախնամ մարմայն, որպէսզի ասոնց եկամուտը՝ իրենց անմիջական ինաժարին ենթակայ աղքատ ընտանիքներու չքաւոր տղաց գրենական պիտոյից ծախսուի:

7. Ներկայ կտակագրիս գործ աղքութեան հոգ տանելու համար, կտակատար կարգած եմ օրուան Հայոց Պատրիարքը և անոր Կոզմէ կարգուելիք փոխանորդը:

Ահա, ասոնք են իմ վերջին փափաքներս և ես կատարեալ գիտակցութեամբս կը ստորագրեմ:

Կ. Պալիս Ֆէրի-գիւլ 31 Հոկտեմբեր 1932  
Նպարավանառ ԳէՈՐԳ ԺԱՄԿՈՅԵԱՆ  
Ողի Պետրոս

Մնթ. Պէտք է գիտել թէ Կնոջը վերապահեալ բաժինը 3450 ոսկի է մինչդեռ կըստանայ 3400 ոսկինոց խանութը, այսինքն 50 ոսկի պակաս, հետեւաբար կրնայ դատարան զիմել և պահանջել 50 ոսկին և նաև զաւկին վերապահեալ բաժինն է 7762,50 ոսկի, մինչդեռ կ'ստանայ 8000 ոսկինոց տունը, որով հայրը իր որդւոյն 237,50 ոսկի կտակած կ'ըլլայ, Այս կերպով եղած կտակներուն գումարը կը համնի.

Զաւկին Պրիգորին	237, 50	ոսկի
Ազգ. Հիւանդանոցին	1100	»
Գալֆայեան Որբանոցին	800	»
Բերայի Աղքատախնամին	500	»
Գումար	2637,50	ոսկի

որ 13,800 ոսկիին կտակելի բաժինէն 50 ոսկի աւելի է, աս ալ կնոջ վերապահուած բաժինէն առնուած 50 ոսկին է:

Եթէ կինը դատարան դիմէ, դատաւորը կտակընկալներէն համեմատութեամբ կ'առնէ այդ 50 ոսկին և կնոջը կը վերադարձնէ: Այս կերպով.

Զաւակը պիտի վերադարձնէ	4,53	ոսկի
Ազգ. Հիւանդանոցը	20,84	»
Գալֆայեան Որբանոցը	15,16	»
Բերայի Աղքատախնամը	9,47	»
Գումար	50,00	»

22. Նօսարի կամ դասաւորի միջոցաւ պատրաստուելիք կազմագիր :

Ներկայ հազար ինը հարիւր երեսուն երկու տարւոյն հոկտեմբեր ամսայ երեսուն և մէկի երկուշաբթի օրը, ստորագրեալս, Պոլիս չարբորդ վագեֆ խան առաջին յարկը բնակող Պոլսոյ երկրորդ նօսար Հասան պէյ որդի Սէլմիք, ծանօթ ծերե գեւզ կշրէփ փոլց 27 թիւ տունը բնակող եւ Պոլս Պալք բազար 137 թիւ խանութը նպարավաճառութիւն ընտակ և իր անձնակ իրը գննելով 1898 թուականի այժմ մնաած Պետրոս Ժամկոցի անձն և նոյնակէս մերած Սրբունիք գուստը Յովհաննէսին նամա, Գէորգ Ժամկոցի անձնակառութեան ներկայաւալափ, իր փերջին Փափաքները մատրամատութեամբ ինձիք բայցատրեց և ներկայ Կտակադիրը պատրաստել առ աշարից :

Գէորգ Ժամկոչինի վերջին փափաքները հետեւեալներն են,  
(Վերեւ նշանակուած 7 պայմանները գրելէ վերը)

Վերոյիշեալ վերջին փափաքները և յատկացումները, Կտակաբարին կողմանէ նյոյութեամբ Կարդացուած և հաստատուած են :

Կ. Պոլս, հազար ինը հարիւր երեսուն երկու հոկտեմբեր երեսուն և մէկ երկուշաբթի օրը:

Նօտար

Կտակաբար

Հասան որդի Սէլմիք

Գէորգ Ժամկոչիան

որդի Պետրոսի

Մենք ստորագրեաւքս, Պոլս Պում-Ժաբու, Հիսար տիպի 14 թիւ տունը բնակող Սահակ Արիսեան որդի Մերոպի և Թօփ. Ժաբու, հեկնեցւոյ փոլցոց նւ թիւ տունը բնակող Սահակ Հուսարարեան որդի Զենոպի, կը վկայենք ու կը հաստատենք թէ՝ մնակի մօտէն շանօթ Գէորգ Ժամկոչին որդի Պետրոսի, վերորդը ալ կտակադ իրը անձամբ կարգաւին և ստորագրելին և թուական գննելուն վերջը, Նօտար Հասան որդի Սէլիմ պէյի առջև յայտարարեց թէ՝ ներկայ Կտակադիրը ամբողջութեամբ կարգացի, իսկապէս իր վերջին կամբ կը պարունակէ :

Ասկէ զատ նոյնպէս կը վկայենք ու կը հաստատենք թէ, Գէորգ Ժամկոչիան միտուով և մարմնով առողջ և դատիկութեան տէր ըլլալով, կատարեալ գիտակցութեամբ շարժէ :

Կ. Պոլս 31 հոկտեմբեր 1932 երկուշաբթի

Վկաներ

Սահակ Արիսեան որդի Մեսրոպի

Ստեփան Լուսարարեան որդի Զենորի

Ստորագրեալս Կ. Պոլսոյ երկրորդ նօտար Հասան որդի Սէլիմի, կը յայտարարեմ թէ՝ ներկայ Կտակադիրը Թօփ. Ժական Հանրատկան տութեան քաղաքային օրէնքին 479—481թ. յօդուածներուն համաձայն պատրաստուած է: Ասկէ զատ, կտակաբար Գէորգ Ժամկոչին և օրինական հանդ ամանքները կատարելապէս լրացնող և կտակաբարին հնու ունէ ազգականութեան կապակցութիւն չունեցող վկաները Սահակ Արիսեան և Սոնիկան Լուսարաբեան, ներկայ Կտակադիրը իս ներկայաւթեամս անձամբ ստորագրած և վերոց քայլ յայտարարութիւնները ըթած ըլլալին կը հաստատեմ և կը վաւերացնեմ:

Կ. Պոլս երեսուն և մէկ հոկտեմբեր հազար ինը հարիւր երեսուն երկու երկուշաբթի:

Նօտար Հասան որդի Սէլմիք

(Կնիք եւ ստորագրութիւն

23. Բերանացի և դամակագիր .— Ներկայ եղող վկաներէն մէկուն կողմէ պատրաստուած և նօթագրուած կտակագիրը .

Պարայ Սուլթան Ահմէտի հաշտարար դատաւորին :

Մենք, ստորագրեալքս, երկուքնիս ալ չափահաս և քաղաքոյին իրաւունքներու տէր, և կտակարարին հետ արենակցական ու ամսւանական ունէ ազգուկանութիւն չունեցողներս, Ժիրայր Արզուեան որդի Միասաքի, և Յարութիւն Նալպանտեան որդի Կիրակոսի իրեն վկաներ հետեւեալ խնդիրը մեր ստորագրութեան ներքեւ կը յայտարարենք :

Այսօր, Հօփրնէէն Պոլիս ճեպընթացով և նպարավաճռով Գէորգ Ժամկոչեան որդի Պետրոսի հետ գալու տահն, դեռ Զաթալճա չհասած, երկաթալուզին խանդարուած ըլլալուն, ճեպընթացը զիծէն ելաւ և իրար անցած կառաջարներու տակէն Գէորգ Ժամկոչեանի օգնութեան աղաղակը լսեցինք: Խոկոյն երկուքս ալ քովը փութացինք և տեսանք որ ոտքին մէկը կտրուած էր և ինքը արիւնլուայ, յուսահատակուն ճիշեր կ'արձակէր: Վրայէն երկաթի և տախտակներու կտորուանքները վերցնելով, վիրաւոր վիճակի մէջ աղատեցինք զինքը: Մանրապէս վիրաւորուած ըլլալուն հակառակ, ինքզինքը չէր կորսնցուցած, ընդհակառակը իր կատարեալ զիտակցութեան և դատելու կորողութեան տէրն էր:

Գէորգ Ժամկոչեանի մահուան մօտենալը հասկնալով, հարցուցինք թէ վիրջին փափաքներ մը ունէ՞ր: Այն ժամտնակ մեր երկուքին հասկնալի ձեւով յատուկ և որոշ հետեւեալ փափները յայտնեց:

(Վերոգրեալ պայմաններուն պէս կամ տարբեր ձեւով) ըսելէն վերը, քիչ մը կենալով կրկին շարունակեց:

Այլեւ ընդհատ ընդհատ անհասկնալի խօսքեր մրմուց և լուսվ հանգիստ քնացաւ:

Զաթալճա գալերնուս, ես, Ժիրայր Արզուեան, խոկոյն ներկայ նօթերը արձանագրեցի և Յարութիւն Նալպանտեանի հետ ստորագրելով պատիւ ունինք Զեր բարձր նկատուոմտն յանձնել զայն:

Նաեւ Զեզ կը հաստատենք ու կը վկայենք թէ Գէորգ Ժամկոչեան յիշեալ վիրջին փափաքները տրտայայտած միջոցին կատարեալ տէր էր իր դիտակցութեան և դատելու կարողութեան:

Ժիրայր Արզուեան որդի Միասաքի Յարութիւն Նալպանտեան որդի Կիրակոսի:

## ՅԱՏԿԱՑՈՒՄ

### ԹԵՂՄԱՆԻ ՖՈՆԴԱՏԻՕՆ

24. Ի՞նչ է յատկացումը .— Օրէնքին և հանրային բարոյականին հակառակ չեղող և որոշ նպատակի մը իրագործման և տեւականացման համար արուած գոյքին՝ այտեկացում»<sup>(\*)</sup> կ'ըսուի :

25. Որո՞նի՞ կարող ին յատկացում ընել .— Քաղաքային իրաւունք ունցող ամէն բարոյական և անհատական անձեր կընան ցյատկացում» ընել :

Ամուսնացեալ կին մը իր անհատական գոյքիրը չի կրնար պատկացում» սեփականացնել առանց այդ մասին իր ամուսնոյն հաւանութիւնը առնելու :

15 տարեկանը լրացնող օրիորդ մը կամ պատանի մը կրնայ կտակադրով «յատկացում» ընել<sup>(\*\*)</sup> :

26. Յատկացումը ինչ ձեւով պատրասելու հ .— Յատկացումը մասնաւոր պաշտօնութիրով և կամ կտակագրով կ'ըլլայ : Այս պաշտօնագիրը ուզզակի յատկացնողին կողմէ և կամ հակակընելու իրաւունք ունիցող պաշտօնատան հրահանգին համաձայն՝ դատական առմարդն մէջ կ'արձանագրուի :

Յիշեալ պաշտօնագրին մէջ «յատկացումը» մատակարարելու պաշտօն ունիցող անձերուն կամ հաստատութեանց անուններն ալ պէտք է զրել<sup>(\*\*\*)</sup> :

Առանց պաշտօնական գրութեան ըլլալիք «յատկացումները» անվաւեր են :

Յատկացումը թէ՛ կենդանութեան և թէ՛ յետ մահու գործադրուելու պայմաններով կրնայ հաստատուիլ :

Յատկացումի պաշտօնագրին մէջ պէտք է զրել .

1. Յատկացման նպատակը .

2. Մատակարարութեան ձեւը .

3. Մատակարարելու իրաւունք ունիցող մարմինները .

Այս պարագաները որոշ և յստակ նշանակուելէն յետոյ պէտք է աւելցնել թէ .

4. «Ներկայ յատկացումը չի կրնար ցոյց արուած նպատակէն տարեկը կամ նոյն իսկ այդ նպատակին յար և նման, ուրիշ հաստատութիւններու գործածութիւնա

Եթէ . յիշեալ կէտերը անորոշ մնան պաշտօնագրին մէջ և

(\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 73:

(\*\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 449:

(\*\*\*) Քաղաքային օրինագիրի յօդ. 74:

եթէ «յատկացում» ընողը մեռած բԱրյ կամ յատկացումին տարբեր նպաստակի մը գործածուելուն դէմ ի վիճակի չըլլայ առարկութիւն ընելու , այն առեն հակակշռելու իրաւունք ունեցող պաշտօնատունը իրաւասու է յարմար դուսած եղանակով տնօրինելու և յատկացումը ուրիշ նման հաստատութիւններու յատկացնելու(\*):

27. Յատկացում մը հակակշռելու իրաւունք ունեցող մարմին . ները որո՞նի են . — Յատկացումը հակակշռելու իրաւունք կրնան ունենալ .

1. Տէրութիւնը .
2. Կուսակարութիւնները .
3. Քաղաքապետութիւնները .
4. Գիւղերու պաշտօնական մարմինները .

Ասոնց իրաքասութիւնները յատկացումներու նպատակներու համաձայն կ'որոշուին :

Հակակշռելու իրաւունք ունեցող մարմինները , յատկացուած գոյքերուն նպատակին ծառայելուն կը հսկեն(\*\*) :

Հակակշռող մարմիններու առաջտրկութեան վրայ , Գործավարներու Խորհուրդը յատկացումը մտակարարող անձերուն աեղեկազիրն ալ ստանալէ վերջը , յատկացման գոյքերուն պահպանման և նպատակին յարաւելման համար եթէ ստիպողականութիւն տեսնէ , կրնայ փոխել յատկացումին մատակարարութեան ձեւը :

Նոյնպէս ըլլալիք առաջարկութեան և ստացուելիք տեղեկացրին վրայ , Գործավարներու Խորհուրդը երբ համոզում գոյացնէ թէ յատկացումը ին նպատակը խաթարուած է . կամ յատկացումը ընողին կամքը չգործադրելու աստիճան խնդիրներ ծագած են , այդ պարագային կրնայ նոյն իսկ յատկացումը ին նպատակը փոխել կամ ծագում առած խոչընդուները անհետացնել(\*\*\*):

28. Ո՞ր յատկացումները հակալշռէ զերծ կացուցուած են . — Ընտանեկան (աիէէ) և կրօնական (տիեանի) յատկացումները զերծ կացուցուած են յիշեալ հակակշռէն(\*\*\*\*) :

Ակրօնական յատկացումը ըսելով պէտք է հասկնալ .

1. Հանգստեան կայուած եկեղեցականներու կենսաթոշակները :

2. Եկեղեցիներու , վանքերու կամ ոեւէ աղօթավայրի պահպանութեան համար նախատեսուած ծախքերը :

(\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 78:

(\*\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 77.

(\*\*\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 78. 79.

(\*\*\*\*) > > > 80:

3. Կրօնքին ծառայելու պատրաստուող հիեղեցականներու ապրուստը հոգալու միջոցները :

4. Կրօնքի մը հետեւող յարանուանութիւններուն օգտին և զարգացման համար եղած յատկացումները :

Հանրային օգտին ծառայող . նոր հիմնուած հիւանդանոց, վարժարան, աղքատախնում, որբանոցի նման հաստատութիւնները , նոյն իսկ եթէ կրօնական մարմիններու կողմէ մատակարարութին կամ Քահանայից Միութեան կողմէ հոգացուին , չեն կրնար օրէնքին ցոյց տուած և կրօնական հաստատութեան» հանդամանքը ունենալ :

Այս տեսող հաստատութիւնները , ոչ թէ մատակարարուելու ձեւէն այլ ցատկացումից նպատակէն կրնան զնահատութիւն :

Ուրիմն , երբ բարեսէր անձ մը որ նոր հիմնուելու համար ռէիւանդանոց»ի «կրթարան»ի «որբանոց»ի նման հաստատութիւններու անուան «յատկացում» մը ընէ , բնական է որ կ'ենթայկուի վերոյիշեալ հակակշռող մարմիններու հոկողութեան և տնօրինութեան : Ասկէ զատ այդպիսի հաստատութիւնները պարտաւոր են արձանագրուելու պահետրական սենեակին :

Սակայն երբ այդ յատկացումը շինուելիք հիւանդանոցին կամ վարժարանին առընթեր հաստատուելիք Ս . եկեղեցւոյն կամ մատուուին ըլլայ , մատկարար և հակակշռող մարմինները մասնաւոր կանոնագրով և պաշտօնական գրերով անկախորէն կրնան կազմուիլ : Իբրև հակակշռող վերին մարմին և կամ կսակարար , նախապէս ավագֆի մը Միւթէ վէլլիին» պէս , ուղղակի օրուան Ս . Պատրիարքն ալ կրնայ կարգուիլ , և այս պարտապային , պաշտօնական արձանագրութենէ (թէսճիլ) ալ զիրծ կրնայ կացուցուիլ :

Կրօնական մարմիններու ըլլալիք յատկացումներուն համար , կառավարական հակակշռող պաշտօնատունները կը միջամտեն միայն այն տաեն երբ զեղծման , զողութեան և այլին ի պէս հանրաւյին իրաւանց<sup>(\*)</sup> հետ առընչութիւնն ունեցող հարցեր պատահին:

Իսկ դատարանները կը միջամտեն և կը վճռեն եթէ անհատական իրաւունքներէ<sup>(\*\*)</sup> անհամաձայնութիւններ ծաղին , ինչպէս նաև եթէ յատկացումի ջնջման , ժառանգական վերապահեալ բաժիններու զեղչման նման խնդիրներ յարու ցուին<sup>(\*\*\*)</sup> :

Շահագրգուսող անձերը , երբ տեսնեն թէ — նոյն իսկ կրօնական մարմիններու — յատկացուած զոյքերը նպատակէն տարբեր միջոցներու կը զործածուին , անշուշտ իրաւունք ունին պետական հակակշռող մարմիններու և իրաւասու դատարաններու զիմել ու բողոքել :

(\*) Հուզուզը ումումիյէ , droits publics

(\*\*) Հուզուզը խուսուսիյէ , droits personnels

(\*\*\*) Քաղաքային օրինագիրը յօլ . 80

29. Յատկայումը լնողին ժառանգորդները եւ պահանջատերը կրնան առարկութիւն ընել :

Անձ անձ, եթէ օրէնքով ցոյց տրուած վերտպահեալ բաժին ունեցող ժառանգորդներ և կամ պարտքեր ունենայ, չի կրնար ամբողջ իր գոյքերը յատկացնել :

Հակառակ պարագային, շահազրդուուզները իրաւունք ունին դատարանի դիմել և եղած ոյտկացումէն» իրենց բաժինները կամ պահանջվը զեղչել տալ(\*) :

Այս պատճառաւ լաւազոյն միջոցն է յատկացումէն առաջ, օրէնքով ճշուած վերտպահեալ բաժինները և պարտապահնջներուն իրաւունքները զեղչել և մնացորդ գոյքերուն համար յատկացում ընել :

30. Յատկացուն մը կրնայ ջնջուիլ .— Յատկացում մը եթէ օրէնքին արամագրութիւններուն և հանրային բարոյականի հակառակ ըլլոյ, պատկանեալ դատարանի վճիռով կը ջնջուի :

Յատկացումով շահազրդուուզ ամէն անձ, եթէ անհատական կամ բարոյական արդար պահանջվ մը ունի, յատկացումը ջնջելու համար կրնայ իրաւասու մարմիններու դիմել և իր առարկութիւնները ներկայացնել :

Յատկացում մը ջնջելու վճիռը, արձանագրիչ պաշտօնէին կը հաղորդուի և յատկացման արձանագրութիւնները պաշտօնական տոմարէն կը ջնջուին : (\*\*)

31. Կտակի եւ յատկացումի տարերութիւնները .— Կտակի և յատկացումի գլխաւոր տարրերութիւնները հետեւեալներն են :

1. Յատկացումը օրինական ձեւերը լրացնելէն վերջը, այլեւս անդարձ հաստատուած կ'ըլլայ, մինչդեռ կտակազդիր մը կտակարին կենդանութեանը իր ուղղուած ձեւով կրնայ փոխուիլ :

2. Կտակագրով պատկացում» կ'ըլլայ, սակայն յատկացման պաշտօնագրով «կտակ» չի կրնար ըլլալ :

3. Յատկացումով տրուած գոյքերը, յատկացուած հաստատութեան ի նպաստ անձեռնմխելի կը մնան և յատկացնողը չի կը նար օգտուիլ անկից, իսկ «կտակ ընող կտակարարը իր կենդանութեանը ուղած չափով կրնայ օգտուիլ կտակած գոյքերէն :

4. Յատկացումը միայն բարոյական հաստատութիւններու ի նպաստ կրնայ ըլլալ, կտակը թէ՛ բարոյական հաստատութիւններու և թէ անհատներու :

5. Յատկացումը թէ՛ բարոյական հաստատութիւններու կողմէ և թէ՛ անհատներու կողմէ կրնայ ըլլալ, սակայն կտակը միայն անհատներու կողմէ կրնայ պատրաստուիլ :

(\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 75

(\*\*) Քաղաքային օրինագիրը յօդ. 80 81

6. Յատկացում մը ի պահանջել հարկին, դորձավարներու խորհուրդին սրոշմամբ կրնայ ու բիշ հաստատութեան մը փոխանցուիլ, սակայն կտակը միայն կտակարարին կամքին համեմատ կը գործադրուի:

7. Յատկացում մը օրինական ձեւերը լրացնելով, յատկացնողին կենդանութեանն ալ կրնայ զործազրուիլ, կտակը յետ մահուեղած կարգադրութիւն մըն է, այնպէս որ, կտակարարը յմեռած չի կրնար նպատակին յատկացուիլ:


8. Յատկացում մը միայն պաշտօնական գրութեամբ կրնայ օրինաւոր նկատութել, մինչդեռ կտակը, ինչպէս որ բացատրեացինք, ձեւագրով, և նոյն իսկ բերանացի այ կրնայ ոււաւ:

9. Ամուսնացեալ կրն մը իր գոյքերը յատկացնելու համար պարտաւոր է իւր ամուսնոյն հաւանութիւնը առնելու, առանց այդ հաւանութեան չի կրնար յատկացում ընել, մինչդեռ առանց իր ամուսնոյն հաւանութեան կրնայ իր կտակը պատրաստելու ուղած կերպով։

469



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041771

(604.)

A 411

ՀԵՂԻՆԱԿԻՒՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Շահատուրքի նոր օրէնքը 1926	17.50
2.	Թուրք քաղաքային օրէնքին ընտանեկան իրաւանց և ժամանդական գիրքերը 1927	100 դր.
3.	Տեղեկագիր ազգապատկան կալու ածոց 1928	— —
4.	«Թուրք Հուգուգ մէջզուաթը Ռէհբէրի» (որ կը պարունակէ թրք. ընդհանուր օրէնսդիրութիւնը) 1933	600 դր.
5.	Կտակ և յատկացում 1934	5 »
6.	Շատ մօտ ատենէն լոյս կը տեսնէ հեղինակին «Թիւրք Հուգուգ մէջզուաթը Ռէհբէրի»ին յաելուածը. պարունակելով 1/11/1932—31/10/1933 թրք. օրէնսդիրութիւնը :	

ԿԵՊՐՈՆԱՏԵՂԻ

Պիմեն Զարդարեան գրատուն

Կ. Պոլս Զամնաֆալլար թիւ 71—73